



# YERKIR

Union of NGO for Repatriation and Settlement  
Union d'ONG pour le Rapatriement et la Réinsertion  
Союз общественных организаций «Еркир» по репатриации и освоению  
Հայրենադարձության եւ հիմնավորման կազմակերպությունների միություն

Մամլո հաղորդագրություն  
11 դեկտեմբերի 2009թ.

## Վրաստանի արտգործնախարար Գրիգոլ Վաշաձեն ստել է Ֆրանսիայի խորհրդարանականներին՝ ջավախքահայ քաղաքական գործիչ Վահագն Չախալյանի գործի առնչությամբ

2009թ. նոյեմբերի 25-ին Ֆրանսիա կատարած այցի շրջանակներում Վրաստանի արտգործնախարար Գրիգոլ Վաշաձեն հանդիպել է Ֆրանսիայի խորհրդարանի Արտաքին հարցերով հանձնաժողովի անդամների հետ՝ պատասխանելով պատգամավորների հարցերին:

Վրաստանի արտգործնախարարին հարց է ուղղել նաև Ֆրանսիայի խորհրդարանի պատգամավոր, Ֆրանսիա-Հայաստան բարեկամության խմբի ղեկավար պրն Ֆրանսուա Ռոշբլանը՝ նախարարից խնդրելով պարզաբանել Վրաստանի հայաբնակ Ջավախքում տիրող իրավիճակը: Այդ կապակցությամբ նախարարի հատուկ ուշադրությունը հրավիրելով 2008թ. հուլիսին՝ ձերբակալված Վահագն Չախալյանի դատավարության շուրջ ընթացող զարգացումներին՝ պատգամավորը, մասնավորապես, նշել է, որ ջավախքահայ քաղաքական գործիչը դատապարտվել է 10 տարվա ազատազրկման կասկածելի, եթե ոչ շինծու մեղադրանքներով, իսկ Վերաքննիչ դատարանը 15 րոպե խորհրդակցելուց հետո թողել է առաջին ատյանի վճիռն անփոփոխ: Պրն Ռոշբլանը տեղեկացրել է նախարարին, որ պայմանական ազատազրկման են դատապարտվել նաև Վահագն Չախալյանի հայրն ու եղբայրը, իսկ Վրաստանի արդարադատական համակարգը ոտնահարել է Ֆրանսիացի փաստաբան ունենալու պրն Չախալյանի իրավունքը: Պատգամավորը նաև նշել է, որ խնդրի վերաբերյալ տեղեկացված են Եվրախորհրդի համապատասխան կառույցները եւ անձամբ Եվրախորհրդի մարդու իրավունքների հարցերով հանձնակատար պրն Համմարբերը:

Ի պատասխան պատգամավորի հարցին պրն Վաշաձեն ասել է, մասնավորապես, հետեյալը. «Ձեր նշած Վրաստանի հայազգի քաղաքացին, ձերբակալվել է շատ լուրջ մեղադրանքների հիման վրա՝ նա տեղեկություններ էր փոխանցում երրորդ երկրին: Ես իրավունք չունեմ նշելու, թե որ... բայց Ձեզ եմ թողնում կռահություններ անելու իրավունքը: Դժբախտաբար, մեր օրենսդրությունը թույլ չի տալիս օտարերկրյա փաստաբանի մասնակցությունը դատավարությանը, բայց նա կարող է ընդգրկվել պաշտպանական խմբի մեջ որպես խորհրդական: Ի դեպ, պարոն Չախալյանը, որը բողոքարկել է վճիռը Գերագույն դատարանում, ունի տարբեր ծագման երկու-երեք փաստաբան: Հակառակ որոշ, հատկապես հայկական սփյուռքի թերթերի ներկայացմանը՝ նրան դատում են ոչ թե նրա համար, որ նա հայ է, կամ պաշտպանում հայության իրավունքները, այլ այն պատճառով, որ նրա դեմ առաջ են քաշված լուրջ մեղադրանքներ: Եթե նա լիներ ազգությամբ վրացի, ապա նա կարժանանար նույն ճակատագրի»:

(Պրն Ռոշբլանի հարցը եւ Վրաստանի արտգործնախարարի պատասխանի ամբողջական տեքստը գետեղված է Ֆրանսիայի խորհրդարանի պաշտոնական կայքում՝ <http://www.assemblee-nationale.fr/13/cr-cafe/09-10/c0910019.asp>):

Մույն հայտարարությամբ Վրաստանի արտգործնախարար պրն Վաշաձեն ըստ էության փորձում է միտումնավոր ապատեղեկացնել Ֆրանսիայի խորհրդարանի Արտաքին հարցերի հանձնաժողովի անդամներին եւ դրանց միջոցով՝ միջազգային հանրությանը:

Այսպես,

1. Բացարձակ սուտ է պրն Վաշաձեյի այն պնդումը, որ Վահագն Չախալյանն իբր մեղադրվում է «երրորդ երկիր տեղեկություններ փոխանցելու» մեջ: Իրականում Վահագն Չախալյանը դատապարտվել է իբր իր տանը վրացի հատուկչոկատայինների կողմից հայտնաբերված «զենք-զինամթերք պահելու», ինչպես նաև՝ «հանրային կարգը խախտող զանգվածային միջոցառումների կազմակերպելու», «ոստիկանության աշխատակցի նկատմամբ խուլիգանության» մեղադրանքներով: Վերջին մեղադրանքները հիմնված են բացառապես նրա՝ որպես ջավախքահայ քաղաքական գործիչ 2005-2006թթ. ծավալած քաղաքական գործունեությանն առնչվող իրողությունների խեղաթյուրման վրա: Ընդ որում, ձերբակալման պահին նրան, նրա հորն ու անչափահաս եղբորը առաջադրվել էր միայն մեկ՝ «զենք-զինամթերքի պահպանման» մեղադրանքը, իսկ այլ մեղադրանքները ավելացվել էին արդեն մեկնարկած դատավարության ընթացքում:
2. Պրն Վաշաձեյն «մոռանում» է նշել, որ մինչև 2009թ. հուլիսը Վրաստանում օրենսդրորեն արտոնված էր օտարերկրյա փաստաբանների մասնակցությունը երկրի ներսում ընթացող դատավարություններին, եւ Վահագն Չախալյանի համապատասխան դիմումից հետո՝ միայն Վրաստանի խորհրդարանը հապճեպորեն օրենք ընդունեց՝ հանելով այդ դրույթը օրենսդրությունից:

«Երկիր» միությունը, հիմնավոր կասկածներ ունենալով, որ Չախալյանի գործի վերաբերյալ նմանօրինակ խայտառակ ապատեղեկատվություն Վրաստանի արտգործնախարարությունը տարածում է եւ այլ համապատասխան հարթակներում, կոչ է անում ջավախքահայության խնդիրներով եւ ջավախքահայ քաղաքական գործչի ճակատագրով մտահոգված եվրոպական եւ միջազգային կառույցներին շարունակել հետեւողականորեն բարձրացնել խնդիրը վրացական պաշտոնյաների հետ տեղի ունեցող բոլոր շփումների ընթացքում: